ՀՀԿ

# ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիս, 2024 թվականի № 53-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, Հանրային հեռարձակողի խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի № 52-Լ որոշման հավելված 1-ով սահմանված «Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրման համար մրցույթի անցկացման» կարգի 18-րդ կետով, հիմք ընդունելով Հանրային հեռարձակողի խորհրդի 2024 թվականի հուլիսի 29-ի № 52-Ա որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհրդի 2024 թվականի հուլիսի 29-ի № 52-Ա որոշմամբ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար հայտարարված մրցույթում հաղթող է ճանաչվել Արմեն Քոլոյանը, որը համապատասխանում է կիրառելի իրավական ակտերով սահմանված՝ մրցույթին մասնակցելու և Ընկերության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակվելու համար անհրաժեշտ պահանջներին, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Արմեն Քոլոյանին 2024 թվականի օգոստոսի 8-ից նշանակել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն 5 տարի ժամկետով:
2. Լիազորել Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահին՝ մինչև 2024 թվականի օգոստոսի 8-ը «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության անունից Արմեն Քոլոյանի հետ կնքել համապատասխան աշխատանքային պայմանագիր:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

31 հուլիս, 2024 թվականի
ք. Երևան